ջևան գաւառի համար 39.000 ռուբլի փող և 2045 պուդ ու 200 չեթվերտ ցորեն։ Անդադար աշխատութեամբ կարճ միջոցում խնդրելով յիշեալ գումարներն ստանալու իրաւունքը, այնուհետ և սաստիկ փութաջանութեամբ սկսեց թիֆլիսից ցորեն և ալիւր ուղարկելը հարկաւոր տեղերի համար, և յոյս ունեմք, որ այդ ցորենը և ալիւրը տեղ հասնելուց՝ մեր չուկաներում ևս հացի գինը բաւականի կիջնի։

Բայց այդ կառավարութիւնից խնդրած օգնութիւնները, պարոնի ինիցիատիւով թիֆլիսի մէջ ստորագրութիւն է բացվել ազուլեցի վաճառականների մէջ յօգուտ չքաւորների և այժմ յաջողութեամբ շարունակվում է։ Լսում ենք, որ մեծ. պարոնը ժողովրդեան համար ամենայն կողմանէ դիւրացնել տալու համար և հոգում է այժմ մեր գաւառի մի քանի այլ կարևորութիւնների մասին ևս, որոյ շարքումը գլխաւոր տեղն է բռնում ածուխի խնդիրը։ Ցայսմի է, որ փայտ կտրելու ածուխ այրելու համար հարկաւոր է իրաւունք և տոմսակ ստանալ անտառապետից վճարելով նորա համար նշանակեալ գումարը, և այնուհետև փայտ ու ածուխ պատրաստել և դուրս բերել ծախելու համար։ Բայց անտառի վերակացուների և նոյն իսկ անտառապետի կամայականութեան և նորա բնակութեան հեռաւորութիւնը (նա կենում է Զանգազուրի Կորիս գիւղում) այնտեղ են հասցրած, որ մի բեռ ածուխը այժմ մեր մէջ ծախվում է 6 ռուբլի, այն ևս լաւ է, եթէ հարկաւոր ժամանակ գտնում էր, ուստի այս բոլոր հացի խնդրից ոչ պակաս նշանակութիւն է ստացել ածուխի և փայտի խնդիրը։ Այժմ տեղեկանում ենք որ պարոնը խնդրած է տէրութեան 10.000 բեռ փայտ և 2000 բեռ ածուխի տոմսակ տալ ձրիաբար մեր գաւառի համար։ Այլ և ոչ պակաս գովասանաց արժանի է պարոնի աշխատութիւնը գաւառի համար Օրդուբաթի մէջ մի օրինաւոր դեղատուն և մի հմուտ բժիշկ ունենալու մասին, որոց պակասութիւնը խիստ զգալի է մեզ համար։

Մի Ազուլեցի

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 5 դեկտ. 79

Ուղարկելով խմբագրութեանդ 5 ռուբլի 30 կոպ. հասուցանելու կամ «Արարատեան» ընկերութեան, կամ Վանայ սովելոց, որին առաւել հարկ կը համարէք, ցանկանում եմ մի քանի խօսք ևս յիշել։ Հայաստանի քաղաքներում և գիւղերում տեղ տեղ կայ հետևեալ գեղեցիկ սովորութիւնը, որ առհասարակ հրաւէրքներում, սեղան նստած ժամանակ, առաջի բաժակները սկսում են դատարկել Կայսեր, Փոխարքայի, Կաթողիկոսի կենաց, ազգիս հաստատութեանը, լրագրերի յարատևութեանը և այլն, և հետևապէս հետաքրքրական խօսակցութիւններ են յառաջ գալի յիշեալ թանկագին կենաքերի բարեմաղթութիւններից՝ և որոնցից յղանում են օգտաւէտ մտքեր թէ բարոյապէս և թէ իրապէս։ Բայց մեր քաղաքում այդ սովորութիւնը դժուար կը տեսնես. մեր հրաւէրքներում, տանտիրապետը՝ առաջի բաժակները կառաջարկէ որոշ որոշ դատարկել տանտիրոջ և ընտանեաց կենաց, երկրորդը նոյնպէս որոշ որոշ ներկայ գանվողների, երրորդը հեռաւոր բարեկամների, չորրորդը՝ Նոյից ըսկսած իւրաքանչիւրի ազգի մէջ որ ննջեցեալի անունը որ յիշեն՝ նորա հոգեթաղը պէտք է վայելեն, և ապա պարտապանաց.... պրծաւ գնաց։

Սակայն մեր այն յետին ժողովրդական դասակարգի հասարակ, բայց հմտասէր ընթերցումը, որը պատրաստել էր ներկայ ամսին պ. Գրիգոր Մատթէոսեանը, որտեղ Տէր Բաղդասար հայրը՝ առաջի բաժակը առնելով ձեռքը բարեմաղթեց երկնի գթութիւնը տաճկաբնակ սովատանջ հայերին և յառաջադիմութիւն «Արարատեան» ընկերութեան, և բոլորիքեանքս ցանկանալով մեր բարեմաղթութիւնը իրապէս լինելու, որի համար իւրաքանչիւրս սկսեցինք մեր չնչին լուման ձգել ազգային գանձանակը։ Բաղդասար քահանայ Ղամազեանց 1 ր., Գրիգոր քահանայ Մանդակունի 1 ր., Գրիգոր Մատթէոսեան 1 ր., Գրիգոր Գալստեան Մարտիրոսեանց 1 ր., Եսայեանք Աւետիքեան 50 կ., Նիկողայոս Սուլթանեանց 40 կ., Գասպար Սուլթանեանց 20 կ., Գաբրիէլ Գաբրիէլեանց 20 կ., ընդամենն 5 ր. 30 կ.։ Էհ, ինչ արած, քանի որ մենք անհոգութեամբ տգիտութեան խաւարի մէջ կամաւ ու բաց աչքով խարխափում ենք և երբէք չենք ուզում ուսման լոյսի օգտաւէտութեան ուշադրութիւն դարձնել, մեր նախապաշարմունքներով լի սովորութիւնները վերադասելով քաղաքակրթեալ եւրոպական ազգերից, չենք ուզում նորանցից օրինակ վեր առնել և նորանց հետևել, սթափելով մեր դարաւոր ու մահագուշակ քնից, հեռատեսութիւն անելով ապագային՝ ջանալ բարւոքելու մեր ներկան, հաստատել քաղաքիս մէջ «Ազգային գանձարան» և պարտաւորել իւրաքանչիւր ընկերութեան (համքեար) թէ քահանաների, թէ ծառայողների թէ վաճառականների, թէ արհեստաւորների և այլն, ամեն տարի ժողովել իրանց մէջ ստորագրութեամբ ամեն մի հոգուց մի մի ռուբլի։ (ինչ մեծ կամ դժուար բան, տարվոյ մէջ մարդագլուխ մի ռուբլի ազգային գանձարանին ընծայել.) և յանձնել ազգային գանձարանին. և մէկ խօսքով ամեն մէկիս մտածմունքը ամեն օգտաւէտ դէպքերի մէջ՝ լինի միայն ազգային գանձարանի արդիւնաւորութիւնը, և որի աղնութիւնը հարկաւոր մէջտեղներում կարողանան գոհացուցիչ օգնութիւն հասցնել թէ «Արարատեան» ընկերութեան, թէ սովատանջեալց, թէ հրկիզելոց, թէ կառուցանելու հարկաւոր տեղերում ուսումնարաններ, և թէ ուրիշ հարկաւոր պէտքեր հոգալու, որով արդարև մեր ազգի ապահովութեանը մտնաւոր ծառայութիւն արած կը լինէինք, այլ ևս մի ռուբլի խնայելու համար՝ չէինք կանգնի լսելու ու տեսնելու հայ ազգի աղէտալի թշուառութիւնները և յուսահատվել հայ անունը կրելու համար, հայ անուն ասում եմ, որի կրող այնքարնակալ դիւցազները՝ ազգերի պատմութեանց մէջ պանդելի փառաց յիշատակի անմահ արձաններ կանգնեցրին, որը հիմա մենք մեր ժլատութիւնով, անհոգութիւնով ու անհեռատեսութիւնովը ուզում ենք նսեմացնել այդ փառք կրող անուան չքեղութիւնը։ Կան մեր ազգի մէջ յատ աւելորդ սովորութիւններ՝ եթէ օգտաւէտի փոխադրվէին՝ որոց համազումը խիստ դիւրին է, արդեօք ազգային գանձարանը իւրաքանչիւր տարի որքան օգուտ պէտք է ստանար, և որովհետև այս օգտաւէտ մէջոցների վրա ուշադրութիւն չենք դարձնում, գոնէ մէկ մէկ հրաւէրքների մէջ էլ նախապէս յիշենք մեր ազգը, բանանք մեր քսակը, ձգենք մեր լուման ազգային գանձանակի մէջ և ապա անխղճաբար ու գոհ սրտով վայելենք մեր խնջոյքը։

Գրիգոր քահանայ Մանդակունի

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Բագու, յունվարի 23

Բագու քաղաքում յօգուտ «Արարատեան» ընկերութեան ժողոված մէկ հազար հինգ հարիւր ռուբլին պ. Տէր-Օհանեանցի միջոցաւ հասուցանելով ձեզ, («Մշակ» № 162, 79 թիւ), խոստացել էի հինգ հարիւր ռուբլի ևս ժողովել, երկու հազարը լրացնելու համար։ Բայց որովհետև Բագուի այժմեան անկեալ դրութիւնը չէ ներում չարունակել իմ յանձն առած պարտաւորութիւնը, վանորոյ այդ հինգ հարիւր ռուբլին ուղարկում եմ ես, իմ սեփականութիւնից, ընդ նմին խնդրելով, խմբագիր տէր, բարեհաճէք նուիրատու պարոնների անունները տպել «Մշակի» համարներից մէկի մէջ, որք են. Նիկոլայ Վարձիգուլեանց 150 ր., Ներսէս Կրասլինիկեանց 100 ր., Աբրահամ Սարուխանեանց 50 ր., Սամուէլ Բաղրեանց 50 ր., Եղբարք Տէր-Օհանեանց 50 ր., Եղբարք Թումանեանց Թարվիցեի 50 ր., Եղբարք Սարգսեանց 35 ր., Մինաս Աբրիանց 35 ր., Գրիգոր Թումայեանց 35 ր., Աղէքսանդր Ադամանց 30 ր., Յովհաննէս Զախմախսազանց 25 ր., Գրիգոր Շահկեղանեանց 25 ր., Առաքել Ծատուրեանց 25 ր., Յակոբ Աւետեանց 25 ր., Նիկոլայ Սափարեանց 25 ր., Եսայի Գրիգորեանց 25 ր., Ամբակում Վէրմիշեանց 25 ր., Եղբարք Բուդաղեանց 25 ր., Եգոր Քալանթարեանց 25 ր., Եղբարք Ժամհարեանց 25 ր., Յարէթ Տէր-Յակոբեանց 25 ր., Աղէքսանդր Տէր-Յակոբեանց 25 ր., Բէկլար Մանուչարեանց 25 ր., Գաբրիէլ Ալիբէկեանց 25 ր., Եղբարք Ադամանց բագուցիք 25 ր., Ոսկան Խաչատրեանց 25 ր., Միկիտ Վարդանեանց 25 ր., Կանտորա Մելքիսեանց և ընկերութիւն 25 ր., Եղբարք Լիանոզով 25 ր., Յովսէփ Թումայեանց 25 ր., Христафоръ Грубище (պ. Ձգնաւորեանցի ձեռամբ Ցարիցինից) 25 ր., Գրիգոր Այվազեանց 25 ր., Աղաւել Յովսէփեանց 25 ր., Միկիտ Շահկեղանեանց 25 ր., Բուդաղամբէկ Մելիկեանց 25 ր., Յակոբ Ապրէսեանց 25 ր., Эмма Орбелянцъ 25 ր., Աղաջան և Ստեփան Ցօնանեանց 20 ր., Միրզաջան Միրզաբէկեան 20 ր., Նազար Շահնազարեանց 20 ր., Մկրտիչ Պատուականեանց 15 ր., Խաչիկ Բէգլարեանց 10 ր., Աղէքսանդր Խաչիկեան 10 ր., Մկրտիչ Աղէքսանեանց 10 ր., Գրիգոր Աղամալեանց 10 ր., Յովհաննէս Ղասրեանց 10 ր., Երիտասարդ ոմն 10 ր., Առաքել Գոչարեանց 10 ր., Եարամիշ Եարամիշեանց 10 ր., Սողոմոն Տէր-Ստեփանեանց 10 ր., Եսայի Պողոսեանց 10 ր., Ստեփան Թաթոսեանց 10 ր., Թումաս Ամիրեանց 10 ր., Միհրան Ղազարով 5 ր., Գասպար Բալամեանց 5 ր., Խոսրով Դանիէլեանց 5 ր., Հայրապետ Հախումեան 5 ր., Աղէքսէյ Քարտաշեանց 5 ր., Նիկոլայ Ղուլիեանց 3 ր., Աւազեան Թումայեանց 2 ր., Պողոս Խանդամիրեանց 3 ր., Մկրտիչ Ճանուսեանց 3 ր., Արտէմ Բազեանց 3 ր., Ջաւադ Աղամալեանց 2 ր., Միքայէլ Բինիաթեանց 2 ր., Սամսոն Չէրքէզեանց 1 ր., Թոմա Պեանշիևъ 1 ր., և Յովհաննէս Վարձիգուլեանց 500 ր., ընդամենը 2000 ռուբլի։ Այս գումարի մէջ է 500 ռուբլի իմ վճարածն, մխիթարեալ անդամութեան համար։

Յովհաննէս Վարձիգուլեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԱԽԱԼՑԽԱՅԻՑ մեզ գրում են։ «Մեր ինտելիգենցիայի մի ընտիր խումբ արդէն պատրաստի ունելով հարկաւոր գումարը մտադիր է չուտով բաց անել մի օրիորդական ուսումնարան, որի պրոգրամման կը լինի տեսական կողմից միայն սովորեցնել գրել և և կարդալ, իսկ գործնական կողմից կատարելագործել այն արհեստների մէջ, որոնցով կարելի կը լինի կանանց մատակարարել ոչ միայն իրանց սեփական պիտոյքը, այլ և արդիւնահանել և շրջակայ տեղերի պիտոյքը, ինչպէս, օրինակ, Աջարիայի կանանց և մարդկերանց հագնող շորեղենները։»

—

Մեզ հաղորդում են ԱԽԱԼՑԽԱՅԻՑ և հետեւեալը։ «Տեղական մանկավարժներից չատերը համոզվում են, որ այժմեան պրոգրամմայով Ախալցխայի օրիորդական ուսումնարանում գործը առաջ տանելը օրից օր դժուարանում է, որովհետև չատերը ծնողներից նկատելով որ իրանց աղջիկները ուսումնարան մտնելու օրից այլ ևս սաչում են դէպի տնային գործերը,—կամ սկսում են հանել զպրոցից իրանց աղջկերանց, կամ թէ չէ, հէնց սկզբից չեն վստահանում ուղարկել նրանց զպրոց։»

—

Դուրս եկաւ մամուլի տակից մի բառգրքոյկ ռուսաց լեզուից ի հայոց լեզու, աշխատասիրութիւն Գ. Հախպատեվանցի։ Գիրքը բաղկացած է մոտ 700 երեսից։ Ծախվում է Թիֆլիսում Զաքարիա Գրիգորեանցի, Վարդանեանցի և կենտրոնական գրավաճառանոցներում։ Գինն է թիֆլիսում 1 ր. 30 կ., իսկ ուրիշ քաղաքների համար 1 ր. 50 կ.։ Գումարով առնողներին զիջումն կը լինի։

—

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ մի պարոն գրում է մեզ. «Ներկայ տարվայ առաջին համարում «Մշակի» ֆելիետոնիաբը յիշում է թէ ձեր լրագրի մէջ տպված է եղել փախստու-խնայողական գիւղական ընկերութիւնների կանոնադրութիւնը։ Ցանկանալով այդպիսի մի կանոնադրութիւն ունենալ, բարեհաճէք ուղարկել ինձ «Մշակի» համարը, որի մէջ տպված է նա։» Մենք պարտաւորութիւն ենք համարում յայտնել պարոնին, որ այդ ընկերութիւնների մանրաման կանոնադրութիւնը, ինչպէս նա վաւերացրած է մինիստրութիւնից, տպված է եղել «Մշակի» մէջ, հայոց թարգմանութեամբ, 1873 թիւն, № 10 և 11 մէջ։ Խմբագրութեան մէջ գտնվելով այդ հին համարները, ուղարկեցինք պարոնին։

—

Հինգշաբթի, փետրվարի 7-ին ռուսաց սիրողներ ներկայացուն, որ պէտք է լինէր Արծրունու թատրոնում, յետ զգվեցաւ սիրողներից մինի հիւանդութեան պատճառով։

—

Կիրակի օր, փետրվարի 10-ին Արծրունու թատրոնում լինելու Ալվեանական կօնցէրտի ժամանակ երգեցողութեան հետ միացրած կը լինեն կենդանի պատկերներ։

—

ՄԵԾ-ՂԱՐԱԲԼԻՍ գիւղից մեզ գրում են, որ փետրվարի 1-ին աւազակները գիշերով կոտրեցին Ց. Աբոյեանցի տունը և տարան բաւական փող, ոսկեղէն, արծաթեղէն և այլ զանազան իրեղէններ։ Աւազակները յայտնի չեն։ Նոյնպէս և անցեալ ամսին անպատ աւազակներ թալանեցին մի զարաքլիսեցուն և տարան նրանից 1700 ռուբլի։

—

Մեզ գրում են ՄԵԾ-ՂԱՐԱԲԼԻՍԻՑ հետեւեալը։ «Մի քանի զարաքլիսեցի կանայք, չքաւոր և որբ օրիորդներին ուսման գործի մէջ օգնելու նպատակով, մի ընկերութիւն կազմեցին, ամսական մի որոշ տուրքով։ Անդամուհիների թիւը հասել է 30-ի և չարունակում է աճել։ Ընկերութիւնը օգնում են նոյնպէս և կողմնակի մարդիկ։ Պ. Խ. Աբոյեանց 20 ռուբլ արժողութեամբ մի պատի ժամացոյց ընծայեց Զարաքլիսի օրիորդական դըպրոցին։»

—

Մեզ խնդրում են տպել հետեւեալը ՄԵԾ-ՂԱՐԱԲԼԻՍԻՑ։ «Այստեղ ստացվեցաւ «Արարատեան» ընկերութեան 1878—79 թ-ի Տեղեկագիրը, որի մէջ ոչ մի երեսում չը կար զարաքլիսեցի Ղազար Աղաբաբանցի 100 ռուբլ նուէրը։ Նուիրատուն ցանկանում է այդ զանցառութեան պատճառն իմանալ։»

—

Փետրվարի 7-ին եղանակը թիֆլիսում կրկին ցրտեց։

—

«Մեղու Հայաստանի» տպել է և «Обзоръ» լրագիրը արտատպել է մի տեղեկութիւն Զարաքլիսի անտառապետի գործի մասին, իբր թէ թղթակիցներից մի քանիմները հրաժարվեցին, ասելով որ երբէք ոչինչ չեն հաղորդել «Մշակին»։ Այդ մեզ չատ զարմացնում է, որովհետև մենք պահած ունենք խմբագրութեան մէջ այն նամակը, որի տակ այն բոլոր պարոնները ստորագրել են, որոնք յանձն էին առնում պատասխանատուութիւն անտառապետի մասին գրված տեղեկութիւնների վերաբերութեամբ։

—

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ գրում են. «Դէպուտատների նախագահութեամբ կազմված ժողովը, որը վճռել էր քաղաքի նշանաւոր դրամատէրներից հանգանակութեամբ հաւաքել մի յայտնի դրամագլուխ ալիւր առնելու և տեղւոյս չքաւոր ընտանիքներին անդրադարձաբար բաժանելու համար, չը յաջողվեցաւ։ Մասնաժողովը չը կամենցաւ ծանրաբեռնել այս պարտականութեամբ միայն դրամատէրներին։ Նրանք տուեցին հանգանակութեանը ընդհանրական բնաւորութիւն, և ամեն փոքր ի չատէ ունեոր քաղաքացի պարտաւորվեցաւ ձգել իր լուման նպաստամատոյց գանձարանի մէջ։ Արդէն հաւաքված է 15,000 ռուբլի, որով մասնաժողովի անդամները պէտք է գնեն ալիւր և փոխադրաբար պէտք է բաժանեն չքաւոր ընտանիքներին։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐՔԻԱ

—

«Голосъ» լրագրի Կ. Պօլսի թղթակիցը գրում է հետևեալը։ «Հայերը իրանց կողմից ամեն միջոցներ գործ են դնում համոզելու Բ. Դրան, որ նա կատարի Բերլինի դաշնագրի 61-որդ յօդուածը և այս օրերս իրանց բոլոր լրագիրներում շատ համոզիչ հրաւէրներ են տպում դէպի Եւրոպան։ այս պատճառով անցեալ օրը տպագրութեան բաժնի գլխաւորը խիստ յանդիմանական թուղթ ուղարկեց հայերին, ասելով որ կանգնեցնեն իրանց գանգատները և այս խնդրի վրա շարունակվող ամեն տեսակ բանակռվի վերջ դնեն։ Բայց անկարգութիւնները այնուամենայնիւ շարունակվում են Հայաստանում, և քուրդերը